ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Գործ թիվ ԵԴ/14302/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19.04.2023թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Մ. Ստեփանյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «Օլանդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Օլանդա» ՍՊԸ) հայցադիմումն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ կողմերի միջև կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

«Օլանդա» ՍՊԸ-ի ի պաշտոնե ներկայացուցիչ Անդրեյ Աշոտի Վարոսյանը 11.04.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և հայցվորի միջև 03.11.2022 թվականին կնքված թիվ «ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-31/22-3» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու պահանջի մասին 15.03.2023 թվականի թիվ 147 հրամանը:

Հայցադիմումը դատավոր Մ. Ստեփանյանին է հանձնվել 14.04.2023 թվականին:

Դատավորի աշխատակազմը 18.04.2023 թվականին հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է հայցվորի ի պաշտոնե ներկայացուցչին առկա թերության վերաբերյալ:

19.04.2023 թվականին հայցվորի ի պաշտոնե ներկայացուցիչը շտկել է առկա թերությունը:

Դատարանը, քննության առնելով ներկայացված հայցադիմումը, գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն, հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների ու 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին, ուստի ենթակա է վարույթ ընդունման:

ՄԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Միևնույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալ հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ պետք է պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանից պահանջել նշված ապացույցները, որոնք վերջինս պետք է դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգորյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ ու 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Օլանդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ կողմերի միջև կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին ընդունել վարույթ, և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 05.06.2023 թվականին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

2. Պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանից պահանջել թիվ ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-31/22-3 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանողի կողմից ենթակա է կատարման այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**